



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

27.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-21/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ ներկայացված «Ազկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 07618419) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ՝ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-21/17 բողոք), 19.09.2016թ. թիվ 1/73-3/22070-16 գրությունը, Ալավերդու համայնքապետարանի 07.09.2016թ. թիվ 1082 գրությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ նաև՝ Նախարարություն), Ալավերդու համայնքապետարանի (այսուհետ՝ նաև՝ Պատվիրատու) 07.09.2016թ. թիվ 1082 գրությամբ հիման վրա, 19.09.2016թ. թիվ 1/73-3/22070-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ազկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի

հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը կատարված ուսումնասիրության արդյունքում 19.10.2016թ. թիվ 01/04.1/3814-16 գրությամբ Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «Ազկա» ՍՊԸ-ն մասնակցել է Ալավերդու համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՄԱԲ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի շրջանակներում, 26.08.2016թ. ներկայացրած հայտի N 3.4 հավելվածը՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Մինչույն ժամանակ, Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 19.09.2016թ. թիվ 1/73-3/22070-16 գրությամբ ներկայացված «Ազկա» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքեր չկան, քանի որ գործում առկա է որևէ տեղեկատվություն «Ազկա» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 26.08.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ համաձայն ՀՀ Տավուշի մարզպետարանի 23.03.2017թ. թիվ 07/17.6/1156-17 գրության՝ վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին «Ազկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտեր է ներկայացրել, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ազկա» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:

2. «Ազկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 27.09.2016թ. թիվ 01/04.1/3571-16 գրությամբ դիմել է «Ազկա» ՍՊԸ-ին, սակայն պատասխան չի ստացվել:

3. Ալավերդու համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ալավերդու համայնքապետարանը 07.09.2016թ. թիվ 1082 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԼՄԱԲ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն նույն գրությամբ Նախարարությանը հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված, Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ազկա» ՍՊԸ-ի տվյալների ճշտման վերաբերյալ կատարված հարցմանն ի պատասխան, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերության հայտի ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

4. ՍՑ-ԳԲԽ-21/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ ներկայացված «Ազկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ալավերդու համայնքապետարանի կողմից Ալավերդի համայնքում քաղաքացիներին սպասարկման գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԼՄԱԲ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.08.2016թ. հայտ է ներկայացրել նաև «Ազկա» ՍՊԸ-ն:

2. «Ազկա» ՍՊԸ-ն 26.08.2016թ. ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

3. Ընկերության հայտով ներկայացրած հավելված N 4 գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է **6 399 954 ՀՀ դրամ**:

4. Պատվիրատուն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Ազկա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

6. Կենտրոնը 19.10.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 01/04.1/3814-16 գրությամբ արձանագրել է «Ազկա» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միաժամանակ հայտնելով, որ Նախարարության 19.09.2016թ. թիվ 1/73-3/22070-16 գրությամբ ներկայացված «Ազկա» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքեր չկան. քանի որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Ազկա» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 26.08.2016թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ համաձայն ՀՀ Տավուշի մարզպետարանի 23.03.2017թ. թիվ 07/17.6/1156-17 գրության, վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով «Ազկա» ՍՊԸ-ն հայտեր է ներկայացրել, ուստի հիմք ընդունելով Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ազկա» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարում ընթացքում **գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի իրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար իրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացում մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:**

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

Ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝ «**Ֆինանսական միջոցներ**» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.4**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

4) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Ալավերդու համայնքապետարանի կողմից Ալավերդի համայնքում քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՄԱԲ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ազկա» ՍՊԸ-ն 26.08.2016թ. ներկայացրած հայտի N 34 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացության՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 ՀՀ դրամ, իսկ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է՝ 6 399 954 ՀՀ դրամ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից 26.08.2016թ. հայտի թիվ 34 հավելվածը՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը, հանդիսանում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ «Ազկա» ՍՊԸ-ն (20.03.2017թ.) հայտ է ներկայացրել ՀՀ Տավուշի մարզապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին մասնակցելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերության ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում վերջինս**

մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ազկա» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **26.08.2016թ.** մասնակցելով «ԼՄԱԲ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև կրկին հայտ է ներկայացրել մասնակցելու ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված գնման ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5670-17 գրությամբ ներկայացված «Ազկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 07618419) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Մարիամ Սարգսյան